Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

15128

1923

2010

«Հաստատում եմ»
Ներքգործկոմ
Ամիրխանյան
20 ապրիլի 1923 թ.

178

# ՀՐԱՀԱՆԳ

## Հ. Ս. Խ. Հ. ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻՆ

### 1. Ընդհանուր մաս

1. Խորհրդային Բանվորա-Գյուղացիական միլիցիան, ներկայացնում է իրենից կատարողական մի մարմին տեղական Բանվորա-Գյուղացիական իշխանության և յենթարկվում է Ներքգործժողկոմատին կից միլիցիայի բաժնին՝ Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի ընդհանուր ղեկավարությամբ։

2. Կանգնելով բանվորական դասակարգի և աղքատ գյուղացիության շահերի պաշտպանության տեսակետի վրա, Խորհրդային միլիցիան իր բոլոր գործողությունների մեջ ղեկավարվում է Բանվորա-Գյուղացիական կառավարության հրամաններով և կարգադրություններով, ինչպես նաև Խորհրդային իշխանության առանձին մարմինների դեկրետներով և վորոշումներով։

3. Միլիցիայի պարտականությունների և իրավունքների սահմանները վորոշում են Բանվորա-Գյուղացիական միլիցիայի կազմակերպության ինստրուկցիայով՝ հաստատված Ներքին Գործոց Ժողովրդական Կոմիսարի կողմից։

4. Յուրաքանչյուր միլիցիոներ իր ծառայության կատարման ժամանակ [illegible] ու անշեղ, օրենքի առաջ պատասխանատու լինելով,

պետք է կատարի ծառայության ընդունելության ժամանակ իրեն տված պարտականությունները։

ա) Կատարել անշեղ միլիցիայի պետերի և նրանց օգնականների բոլոր հրամանները և կարգադրությունները։

բ) Անշեղ հետևել, որպեսզի քաղաքացիների կողմից ի կատար ածվեն Խորհրդային իշխանության բոլոր որոշումները և կարգադրությունները։

գ) Պահպանել խիստ դիսցիպլինա և կարգ։

դ) Լինել ազնիվ, զգաստ, կատարող և քաղաքավարի։

ե) Անխախտ ճնշել Բանվորա-Գյուղացիական իշխանության դեմ ծագող ամեն մի ընդվզում։

զ) Բոլոր ուժերով և միջոցներով պաշտպանել Խորհրդային Հայաստանը բոլոր իմպերիալիստներից և բանվորության ու աղքատ գյուղացիության այլ թշնամիներից, դուրս գալով նրանց դեմ կարմիր բանակի հետ միասին։

5. Միլիցիոները պարտավոր է ճշտիվ և պարզ պատկերացնել իրեն այն քաղաքի և տեղի պլանը, որտեղ նա ծառայում է։

6. Միլիցիոները պետք է գիտենա, որ ծառայությունից դուրս, նա դարձյալ նույնն է, այդ իսկ պատճառով, յեթե նա նկատի որևէ հանցագործություն, կամ ապօրինի գործողություն, պարտավոր է իսկույն և եթ համապատասխան միջոցներ ձեռք առնել։

7. Միլիցիոները ծառայության ժամանակ կամ ծառայությունից դուրս չպետք է լինի հարբած, հիշելով, որ նա քաղաքացիների համար պետք է հանդիսանա զգաստության օրինակ։



8. Միլիցիոները պարտավոր է իր զենքի պահպանության և մաքրության վրա հսկողություն ունենալ, ինչպես նաև խնամքով պահել իրեն տրված հագուստեղենը։

## 2. Ով է միլիցիոներ

Միլիցիոները պահպանում է Բանվորա-Գյուղացիական կառավարությունը, նա հսկիչ է կարգապահության, նա պաշտպան է քաղաքացիների կյանքի ու գույքի։ Միլիցիոների անձնավորության մեջ քաղաքացիները պետք է տեսնեն իրենց պաշտպանին և նրանից պետք է ստանան ամեն օրինական օգնություն։

## 3. Պահակային ծառայություն յեվ միլիցիոների պարտականությունները

1. Միլիցիոների պահակատեղ կոչվում է փողոցի կամ միջափողոցի մի որոշ մասը, որտեղից միլիցիոները պարտավոր է հսկել այդ փողոցն ու տները։

2. Պահակատեղը լինում է շարժական և անշարժ. շարժական պահակատեղում յեղած միլիցիոները պետք է շրջի իրեն հսկողության տրամադրված տարածության վրա, իսկ անշարժ պահակատեղում միլիցիոները պարտավոր է կանգնած մնալ այն տեղում, որտեղ նրան կանգնեցրել են։

3. Միլիցիոները, գտնվելով իր պահակատեղում, հսկում է, որպեսզի փողոցը լցված չլինի կառքերով, սայլերով և այլ կուտակումներով։

4. Միլիցիոները, գտնվելով իր պահակատեղում, պարտավոր է լինել փողոցի մեջտեղում և փոչ մայթի վրա, համենայն դեպս այնպիսի մի աչքի ընկնող տեղում, որտեղ ամեն փո

նրան կարողանա տեսնել և հարկ յեղած դեպքում զինել նրան։

5. Միլիցիոները պարտավոր է ամեն մի կատարվող դեպքի մասին հեռախոսով կամ իրեն հայտնի քաղաքացիների միջոցով հայտնել քաղաքամասը։

6. Հանցագործ անձանց միլիցիոները պարտավոր է անմիջապես ձերբակալել, յեթե նույնիսկ հանցանքից տուժողները խնդրեն նրանից այդ բանը չանել։

7. Ամեն մի կատարված դեպքի վերաբերյալ միլիցիոները պետք է պարզե, թե ով է յեղել վկա դեպքը կատարվելու ժամանակ և գրել վկայի կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը, հասցեն և հայտնել համապատասխան քաղաքամաս։

8. Հանցանքը նախազգուշացնելու և վերջ տալու նպատակով, ինչպես նաև հանցավոր տարրերից հասարակական ապահովությունը պահպանելու համար, յուրաքանչյուր պահակային միլիցիոներ կատարելու յե հետևյալը.—

ա) Հավաքել տեղեկություններ պահակատեղի շրջանում գտնվող կասկածելի անձնաց հավաքատեղերի մասին։ Պահկությունը վերջացնելուց հետո հաղորդել ստորադասական կարգով։

բ). Հետևել պահակատեղի շրջանում հանցանքի մեջ մեղադրվող անբարեհույս անձանց, պարզելով, թե ինչ նպատակներով են կատարվում նրանց այցելումները, ուր և ինչի համար է այցելում կասկածավորը։

գ). Պահակատեղում կանգնած միլիցիոները յեթե նկատի յերեկոյան կամ գիշերը մարդկանց, վորոնք կապոցներով, կամ այլ իրերով դուրս են գալիս տներից, պարտավոր է հարցնելու,



թե ուր են գնում նրանք, պարզել, թե չի պատահել արդյոք վորևե գողություն այն տան մեջ, վորտեղից դուրս հանվեցին իրերը և յեթե իրոք այդպիսին յեղել է, անմիջապես ձերբակալել հանցավորին։

9. Ինչ դեպքում միլիցիոներին թույլատրվում է ձրի կառքից օգտվել.

ա). Հարբածին քաղաքամաս ուղարկելու համար.

բ). Պառաված, հիվանդներին և հանկարծակի մեռածներին հիվանդանոց փոխադրելու համար։

10. Պահակատեղերում կանգնած միլիցիոներներին արգելվում է նստել, քնել և զբաղվել դատարկ խոսակցություններով. պահակատեղերի միլիցիոներների կուտակումը և պահակատեղում չը լինելը հինգ րոպեից ավել անթույլատրելի է։

11. Միլիցիոները չի կարող ինքնագլուխ թողնել իր պահակատեղը բացառությամբ այն դեպքի, յերբ այդ պահանջում է ծառայության անհրաժեշտությունը. միայն պահակատեղից հեռանալու ժամանակ նա պետք է հայտնի հարևան պահակատեղի միլիցիոներին։

12. Իր պահակատեղում միլիցիոները պարտավոր է իմանալ 1. պահակատեղի համարը, պահակատեղը շրջապատող փողոցների, միջափողոցները, նրբանցքները, միջանցիկ բակերը, 2. Դեղատների և հիվանդանոցների հասցեները և մոտակա պետական հիմնարկությունների և իրեն քաղաքամասի հեռախոսների համարները։

13. Հետևել իր քաղաքամասի փողոցների մաքրության վրա, ձեռք առնել միջոցներ, վորպեսզի փողոցների վրա կեղտոտություններ և անմաքուր ջրեր չթափվեն։

14. Չը թույլատրել առանց համապատասխան թույլտվության առևտուր։

15. Արգելել հարբածներին մնալ փողոցներէ վրա՝ յեթէ անձնավորութիւնը հայտնի է և ապրում է իր պոստի շրջակայքում ուղարկել իր բնակարանը. իսկ յեթէ ոչ՝ ուղարկել նրան քաղաքամաս:

16. Հետևել, վորպեսզի փողոցից խմիչքներ չը վաճառեն թույլատրված վայրերից կամ շէնքերից դուրս:

17. Հսկել, վորպեսզի հեռագրական, հեռախոսային լարերին և ելեքտրական լամպերը չը փչացնեն չարագործների կողմից և չը թույլատրել ձեռք տալ առանց վորևէ պատշաճավոր թույլտվութեան:

18. Արգելել ավտոմոբիլների, կառքերի և ձիերի արագ յերթեվեկութիւնը, ստուգել՝ ունեն արդյոք այդ փոխադրման միջոցները վորոշված համարներ, կամ յերթեվեկութեան թույլտվութեան:

19. Բոլոր բնակարան չունեցող յերեխաներին հավաքել և ուղարկել քաղաքամաս՝ վորբանոցները ուղարկելու կամ իրենց ծնողներին հանձնելու համար:

20. Չը թույլատրել պոռնիկներին անկարգութիւններ անել փողոցներում կամ խմբերով հավաքվելով՝ անցուդարձ անողների ուշադրութիւնը գրավել կամ յերևալ հարբած դրութեան մէջ:

21. Հետևել, վոր պաշտոնական հիմնարկների և մասնավոր անձանց աներում լուսավորութիւնները վառված լինեն իր ժամանակին, այն դեպքում, յերբ լուսավորութիւնները չեն վառվում, հայտնել ելեկտրական կայարան և զգուշացնել մասնավոր անձանց տներու:

22. Բոլոր պաշտոնական անձանց հարկ յեղած դեպքում ցույց տալ որինական աջակցութիւն:



23. Յեթէ միլիցիոները նկատում է իր պոստի շրջանում անհայտ անձանց կուտակում, պարտավոր է անմիջապես հայտնել քաղաքամաս:

24. Պարտավոր է հետևել, վորպեսզի հրդեհումներ չը լինեն, իսկ յեթէ վորևէ տեղ նկատում է ծուխ և կրակ՝ անմիջապես ստուգում է հրդեհ է, թէ ոչ, յեթէ հրդեհ է՝ միջոցներ է ձեռք առնում հանգցնելու, հայտնում է քաղաքամաս, և միջոցներ է ձեռք առնում, վորպեսզի դուրսի թալան տեղի չունենա, մինչև իշխանութեան հասնելը: Միաժամանակ հետաքրքրվում է իմանալ՝ ինչից է առաջացել հրդեհը. և ով է մեղավորը:

4. Յերբ միլիցիոները իր ծառայության կատարման ժամանակ կարող է զենք գործածել

1. Զենքի գործածութիւնը թույլատրվում է միմիայն բացառիկ դեպքում: Միայնակ միլիցիոները գործածում է զենք հետևյալ դեպքերում.

ա). Ինքնապաշտպանութեան ժամանակ, յերբ վոր թշնամին զենքով հարձակվում է գործում նրա, վրա, կամ յերբ վոր նրա կյանքը վտանգի մէջ է:

բ). Բանտարկյալի կամ հանցավորի փախուստի ժամանակ, յերբ չկա այլևս ուրիշ միջոց նրան ձերբակալելու:

գ). Ուրիշ անձանց ինքնապաշտպանութեան դեպքում, յերբ նրանց վրա հարձակվում են գործում և յերբ պաշտպանութեան ոչ մի միջոց անհնարին է յեղել ձեռք առնել:

2. Սավետական միլիցիայի խումբը գործածում է զենքը.

ա). Առանց նախազգուշացման՝ սավետական իշխանութեան դեմ ընդվզումներ ճնշելու դեպքում:

բ). Սավետական միլիցիայի խմբի վրա ամեն մի զինված հարձակումների ժամանակ:

դ). Բոլոր այլ դեպքերում զենքը գործածվում է յերեք անգամ նախազգուշացնելուց հետո:

3. Բոլոր դեպքերում զենքը գործածելուց հետո միլիցիոները զեկուցում է անմիջական իշխանավորին:

## 5. Ինչ է միլիցիոներին արգելվում

1. Իր ծառայության պարտականությունների կատարման ժամանակ ընդունել վորևէ հանձնարարություն.

2. Միլիցիոների պաշտոնական դրությունը նրա սովորական կյանքի ասպարեզում չե տալիս նրան վոչ մի առավելություն ուրիշ քաղաքացիների հանդեպ, նա իրավունք չունի հերթից դուրս ստանալու մթերքներ, ձրիաբար հաճախելու թեատրոններ, հանդեսներ, ներկայացումներ և այլն:

3. Հայտնել մասնավոր անձանց վորևէ տեղեկություններ հանցանքների և դեպքերի ինչպես նաև ծառայական իշխանության պաշտոնական կարգադրությունների մասին և տալ կարդալու միլիցիայի վերաբերյալ հրամանները և հրահանգները:

4. Ընդունել մասնավոր անհատներից վորևէ մթերք և վարձատրություն իրեն արած ծառայության համար:

## 6. Ինչ պետք է ունենա միլիցիոները իր ծառայության պարտականությունների կատարման ժամանակ.

1. Իր ծառայության պարտականությունները կատարելու ժամանակ միլիցիոները պարտավոր է ունենալ.

ա). Իր զենքը, փամփուշտները և սուլիչը.
բ). Յուր անձնական տոմար
գ). Պահակային գրքույկը
դ). Գրելու համար գրքույկ և մատիտ:

Հ. Ս. Խ. Հ. Միլիցիայի կոմիսար՝ **Վ. ԲԱԼՅԱՆ**

Տեսչական յենթ/բաժնի վարիչ՝ **Ս. ԽՈՒԴԳԱՐՅԱՆ**

2013
<< Ազգային գրադարան
15228
NL0048056